Մեր տէրտէրները դեռեւս չեն լուծել այն հարցը, թէ արդեօք գետնախնձորը կարելի՞ է ուտել պահոց օրերում:

Ասլանը ժպտաց:

— Շատերը ինձ մեղադրում են, — շարունակեց նա, — թէ ինչո՞ւ վանքում ես հիմնեցի երկրագործական դպրոց, թէ մի այդպիսի հիմնարկութիւն բոլորովին հակառակ է վանքի նշանակութեանը եւ այլն: Ասեցէք խնդրեմ, պարոն բժշկապետ, ո՞վ արդեօք, աւելի քան վանականը, պէտք է ծանօթ լինի երկրի ու նրա մշակութեան գործի հետ: Վանքը լոկ աղօթատեղի չէ, նա ունի ընդարձակ տնտեսութիւն, որը, կանոնաւոր կերպով կառավարելու համար, պէտք է երկրագործական մեծ հմտութիւններ ունենալ: Կարդացէք մեր վանքերի պատերի վրայ քանդակած արձանագրութիւնները եւ դուք կը տեսնէք, որ, սկսեալ մեր հին թագաւորներից, իշխաններից եւ իշխանուհիներից, մինչեւ մեր ժամանակների բարեպաշտները, ընծայել են մեր վանքերին ամբողջ գիւղեր, ագարակներ, ընդարձակ անտառներ, այգիներ եւ այլն, այնպէս որ, վանքերը մեր կողմերում, եւ առհասարակ Հայաստանի մէջ, ամենահարուստ կալուածատէրերն են: — Վանականները ինչպէ՞ս կարող են կառավարել այդ կալուածները, եթէ ծանօթ չեն գիւղատնտեսութեան հետ: Ամենաբարեխիղճ կապալառուն անգամ կարող է խաբել նրանց: Բացի դրանից, իրանց անընդունակութեամբ միշտ կարող են վատնել կալուածները, ինչպէս շատ վանքերինը վատնուած է:

Ասլանը, որ բոլոր ժամանակը ուշադրութեամբ լսում էր, հարցրեց.

— Դուք որեւիցէ վտանգ չէ՞ք նախատեսում, Հայրիկ, երբ վանականները իրանց կալուածական հարստութեան հետ կը ստանան ե՛ւ կրթութիւն, ե՛ւ ուսում:

— Ի՞նչ վտանգ կարելի է սպասել կրթութիւնից, — հարցրեց Հայրիկը ոչ սակաւ զարմանալով:

— Այն վտանգը, որ կոչւում է կղերականութիւն: Մինչեւ այսօր ձեր վանականները անզօր եւ անվնաս էին, որովհետեւ անկիրթ էին, բայց, կրթուելով, նրանք ուժ կը ստանան, կաշխատեն իշխել ժողովրդի վրայ եւ հարստահարել նրան:

— Այդ հազիւ կարող է պատահել մեր մէջ, — պատասխանեց Հայրիկը: - «կղերականութիւնը» հակառակ է մեր եկեղեցու ոգուն, որը կատարեալ ժողովրդական բնաւորութիւն ունի: Եւ եթէ վանականները կրթուելով կարող են բռնանալ ժողովրդի վրայ եւ հարստահարել նրան, չէ՞ որ, որքան կրթուեն վանականները, նոյն չափով եւ գուցէ աւելի կը կրթի ժողովուրդը, եւ այսպիսով